

Գրության և Աշխարհու

ՍՍՌ-ՈՒՄ

ՍՈՍԻՉԱՄԱԾԻԿԻ ԿԱԶԵԻՆԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

«Ստավինգրադստրոյ» տրեստի լաբորատորիայի աշխատակիցներ Գ. Ի. Ֆրոյմովիչը և Վ. Ի. Բեզուգովումուվը կազեինի հիման վրա պատրաստել են սոսնձամաժիկ, որն օժտված է կացներու բարձր հատկություններով և ավելի էժան է, քան կազեինի սոսինձը:

Մածիկի բաղադրությունը ըստ կշռի հետեւալն է՝ կազեին՝ 24%, «40» մարկայի պորտանդցեմենտ՝ 17%, աղացած կավիչ՝ 59%։ Կշռելուց հետո բաղադրիչ նյութերը խնամքով խառնուեն և ջրով բացում՝ մինչև աշխատանքային թանձրացումը։

Այդ մածիկով կարելի է կացնել ատաղձագործական առարկաները, լինուելումը փակցնել հատակներին, լինկրուստը՝ պատերին։

Մածիկի շոր խառնուրդի մեկ կգ-ի արժեքը 5 ռուբլի 44 կոպեկով ավելի էժան է՝ կազեինից։

(«Վեստնիկ Սովնարխոզա», № 7, 1958, Վորոնեժի ժողովադատություն)

ՈՒԼՏՐԱՉԱՅՆԸ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵջ

Վորոնեժի տնտեսական շրջանի Ժողովադատությունը որոշում է քննումնել ձեռնարկություններու ուլտրաձայնի և էլեկտրատեխնոլոգիայի արմատավորման աշխատանքները կազմակերպելու մասին։ Հաստատվել է այդ աշխատանքների թեմատիկան և օրացուցային գրաֆիկը։

Առաջին հերթին Վորոնեժի լիկորա-ջրային

գործարանում արմատավորվելու է ուղորաձայնի օգնությամբ ապակի տարայի մաքրման մեքենան։ Մեքենաշինական գործարաններուա առաջարկվում է արմատավորել մանր և միջին դետալների մաքրումը ուղղաձայնի միջոցով։ Ծինարարության և Ծինանյութերի վարչությունների ձեռնարկություններուա կիրառվելու են գործիքներ՝ բետոնի որակը և ամրանի տեղադիրքի խորոշությունը որոշելու համար։

Ընթացիկ տարվա նոյեմբերին Ռամանի շաքարի գործարանում պլանավորված է արմատավորել ուղղաձայնական իմպուլսային տեղակայում՝ ջերմային առարատուրայի պատերի վրա գոյացող նստվածքը կանխելու համար։ Պլանավորվում է նույնպես մետաղների էլեկտրախմապուլսային մշակումը, յուղային էմուլսիաների պատրաստությը ուղղաձայնի օգնությամբ և ջատուկի բաներ։

Մի շարք մեքենաշինական ձեռնարկություններում ուղղաձայնի ավելի հաջող արմատավորման համար կազմակերպվելու են նոր տեխնիկայի բյուռոներ և բաժիններ՝ իրենց գիտահետազոտական էքսպերիմենտալ և արտադրատեխնիկական բազաներով։

Քաղաքի գիտնականների հետ միասին այդ բյուռոներն ու բաժինները պետք է մշակեն և արմատավորեն նոր տեխնոլոգիական պրոցեսներ, առարատուրայի և սարքավորման տեսակներ։

(«Վեստնիկ Սովնարխոզա», № 2, 1958, Վորոնեժի ժողովադատություն)

Զապորոժիեի Ժողովնայի կազմունար» գործառնութեան մոնտաժվել է փոքր գարագիտի տեղակայում՝ կապրոնից դետալներ ձուլելու համար, սարեկան 3 և կարողությամբ, Այդ տեղակայման օգնությամբ կարելի է պատրաստել մինչև 400 գ կշռող դետալներ, Մեծ դետալների ձուման ժամանակ մամլից կաղապարները նախօրությացվում են մինչև 80—100°:

Կապրոնից դետալներ պատրաստելու համար իրարկ հոմք հանդիսանում են կապրոնի գործվածքների մնացուկները և կապրոնային խեժը:

Գործարանում կատարված փորձերը ցույց են տալիս, որ կապրոնը լավ եռակցվում է և և գունավոր մետաղների հետ: Այստեղ կիրառվում են դետալներ, որոնք երեսապատված են կապրոնի բարակ շերտով:

Ներկայումս աշխատանքներ են տարվում կապրոնի դետալների կծկումը, ինչպես նաև մամլման համար պահանջվող թույլտվածքները որոշելու համար:

(«Տեխնիկո-էկոնոմիկ բյուլլետեն» № 2, 1958, Զապորոժիեի ժողովնային)

ԱՊԱԿԵ ՓԱՅԱՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱՄԵԿՈՒՍԻԴ ՆՅՈՒԹԵՐ

Վ. Ի. Ղենինի անվան Համամիութենական էլեկտրատեխնիկական ինստիտուտը մշակել է, իսկ Մոսկվայի մարզի ժողովնային «էլեկտրոիզոլիտ» գործարանում յուրացվել են առաձգական և կաղապարման ապակե փայլարային նյութեր, որոնք նախատեսված են էլեկտրական մեքենաների փորատների մեկուսացման համար:

Ապակե փայլարային նյութերը ներկայացնուած են փայլարային թղթի մեկ կամ մի քանի շերտ (նայած նրա հաստությանը), որոնք տուգորվել և սիլիցիումի՝ օրգանական կապակցողի օգնությամբ կացվել են ապակե գործվածքին:

Տուգորված փայլարային թույլթը ապահովուած է նյութի էլեկտրական, իսկ ապակյա գործվածքը՝ մեխանիկական ամրությունը: Փայլարային թղթի, ապակե գործվածքի և կապակցողի շերմակայունությունը թույլ է տալիս այդ նյութերը

օգտագործել 200°-ից ավելի բարձր աշխատանքային շերմաստիճաններում:

(«Տայջելա պրոմանագություն» Մոսկվայի մարզի ժողովնային բյուլետեն, № 1, 1958, էջ 34):

ՄԵԿՈՒՍԻԴ ԳԼԱՆԻԿՈՒՍԻՐԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ

Մինչև այժմ էլեկտրական հաղորդագիծ անցկացնելիս մեկուսի գլանիկներն ամրացվում էին պտուսակների օգնությամբ: «Զերվոնոգրադիլստրոյ» տրեստի տեխնիկական բաժնի պետ՝ ինժեներ Կնիշը առաջարկել է էլեկտրական գլանիկների սառչելով կաշելու եղանակը:

Այդ եղանակը շատ պարզ է: Գլանիկների անցքերը լցվում են 500 մարկայի ցեմենտի լուծույթով, որին ավելացվում է 5% քլորային կալցիտամ պնդացումն արագացնելու համար: Բետոնի միջադիրներում կամ աղյուսի պատերում 0,5 սմ խորությամբ պատրաստված փոսիկները լցվում են այդ նույն լուծույթով, այնուհետև ցլանիկներն ամրացվում են նրանց: Մի քանի ժամից հետո գլանիկը պինդ կերպով միանում է բետոնին, աղյուսին կամ սվաղին:

Տրեստի շինվարչությունը գլանիկների սառչելով կաշելու եղանակը կիրառել է 33 բնակարանից բարկացած տնում և ամբողջատրիայի շենքում հաղորդագիծ անցկացնելու ժամանակ:

Այդ մեթոդի առավելություններն ակնհայտ են՝ վերացել է փայտե միջադիրների համար անցքեր փորելու անհրաժեշտությունը, իսկ պտուսակները բոլորովով պետք չեն:

Ինժեներ Կնիշի առաջարկությունը զգալիորեն կարագացնի էլեկտրիկների աշխատանքը և այս տարի միայն շինվարչությունը կտա մոտ 300 հազ. ուռություն տնտեսում:

(«Բյուլլետեն տեխնիկո-էկոնոմիկ ինֆորմացիա», № 8, 1958, էջ 47, կամ ժողովնային)

ԼՔՄՊԱՆՁԻՏԻ ՊԱՏՐԱՍՄԱՆ ՆՈՐ ՏԵԽՆՈՒՌԻ

Էքսպանզիտը բարձրորակ մեկուսի նյութ է, որը լայնորեն կիրառվում է նավաշինական, սառնարանային արդյունաբերության մեջ և մյուս ճյուղերում:

Մինչև այժմ նա պատրաստվում էր խցանի ձավարից կամ մամլակոմպողիցիայի մնացովկ-ներից՝ մամլակաղապարների մեջ ներմամլելու և 2—2,5 անգամ սեղմելու միջոցով։ Հատուկ խցիկում 270 — 290°C -ում կատարվող ջերմացին մշակումը հանգեցնում էր խցանային նյութի ընդարձակմանը։ Այդ գեպքում ստացված էքսպանդիտի ծավալացին կշիռը զգալիորեն իշնում էր։ Անջատվող խեժանյութերը ծառայում էին իբրև կապակցող։

«Բոլցմիկ» գործարանի գլխավոր ինժեներ Ն. Կոնժինը, մեկուսիչ ցեխի պետ Վ. Պետրովը և ավագ քիմիկոս Ա. Բաղդասարյանը առաջարկեցին նոր տեխնոլոգիայով, թանկարժեք խցանի հումքի ծախսը պակասեցնելու նպատակով, ստանալ ջերմամեկուսիչ մի նյութ, որն օժտված է էքսպանդիտի հատկություններով։

Խցանի ծավարը կամ նրա մանրացված մամլակոմպողիցին մնացովկում մամլվում են այն հաշվով, որպեսզի սեղմման աստիճանը չգերազանցի $1,5$ — $1,7$ անգամից։ Որպես կապակցող ավելացվում է ցելյուլոզային արտադրության մնացումներից պատրաստված սուլֆիտացին սոսինձը կամ ՍՎԽ-1 սոսինձը։ Զերմամշակումը կատարվում է 230 — 240°C ջերմաստիճանում և թույլ է տալիս մասամբ ընդարձակել ծավարը ու թիթևացնում է նյութերը։

Էքսպանդիտի պատրաստման նոր տեխնոլոգիան արմատավորվել է արտադրության մեջ։ Այդ գեպքում ստացվող պրոդուկտը իր հատկություններով լիովին համապատասխանում է տեխնիկական պայմանների պահանջներին։ Նրա ծավալացին կշիռն է $0,18$, ծուման դիմացկումությունը՝ $1,5$ կգ/սմ², ջերմահաղորդականությունը՝ $0,05$ սահմաններում։

Հաշվումները ցույց են տվել, որ «Բոլցմիկ» գործարանում խցանային հումքի տարեկան տրնախառությունը կկազմի 450 տ կամ 1 մին. սուբլոց ավելի։

(«За технический прогресс», անհենկատեասական բյազեան, № 5, 1958, էջ 32—33, Օդեսա)։

ԳՈՐ ԴՈՒԽԻԾԵՐ

«Սեմերնոյե սիյանիե» պարֆյումերիայի ֆարմիկայի աշխատողները՝ պարֆյումեր Վ. Ռ. Զու-

նանյանցը, սորուն կոսմետիկայի ցեխի պետ Մ. Մ. Գոլուբեան և լաբորատորիայի պետ Ն. Ի. Իոնովան մշակել են չոր դրսիների ու ցեղապտուրան և նրանց սերիական արտադրության տեխնոլոգիան։

Չոր դրսիները հանդիսանում են պարֆյումերիայի արտադրանքի նոր տեսակը, որը մինչև այսօր երկրի պարֆյումերիական ոչ մի ֆաբրիկա չի թողարկել։ Նրանք նախատեսված են սպիտակեղենն ու վերնազգեստը անուշահոտ դարձնելու համար։

Չոր դրսիները պատրաստվում են սորուն հիմքով, վերջինս բաղկացած է տալկից և մանրացրած թելավոր նյութերից, որոնք մշակվել են զանազան անուշահոտ նյութերով։ Տեղափորկում են մետաքսից և ցելյուֆանից պատրաստված փոքրը փաթեթներում։

Ցեղագանի փաթեթից հանելուց հետո դրսիները պահպանում են սկզբնական հումքի կայունությունը երեք և ավելի ամիսների ընթացքում։

Չոր դրսիների ասորտիմենտը ընդգրկում է մոտ 10 անվանում՝ «Սպիտակ յատաման», «Շիպրո», «Արծաթափայլ հովտաշուշան», «Հյուսիսափայլ», «Անարգիս», «Դայանե», «Հելլարա», «Մայսի 1», «Հոբելյան» և այլն։

Ֆաբրիկայի աշխատողները շարունակում են զանազան կոմպոզիցիաների և ուղեապտուրաների ընտրության էքսպերիմենտալ աշխատանքները, հետախուզում են ավելի կայուն անուշահոտ նյութանյութեր՝ ասորտիմենտը ընդարձակելու և դրսիների որակը բարձրացնելու համար։ Կատարելագործվում է տեխնոլոգիան, տարվում են արտադրական պրոցեսների մեջենայացման աշխատանքները, պայմաններ են ստեղծվում հուսքին մեթոդով չոր դրսիներ պատրաստելու համար։

Այդ ամենը թույլ կտա ձեռնարկությանը ընթացիկ տարում տալ լայն ասորտիմենտի պարֆյումերիական նոր արտադրանքի առնվազն 300 հազ. փաթեթ։

(«Ленинградская промышленность», աղաղական-տեխնիկական բյազեան, № 2, 1958, էջ 106, կենժողատակություն)։